Երվանդ Նազարեթյան

Ես քեզ տեսա իմ մեջ և ինձ քո մեջ տեսա

Ես քեզ տեսա իմ մեջ և ինձ քո մեջ տեսա,

Վերից ինձ ուղարկված լուսաթռիչ պարգև,

Մեր սրտերը վեհից թև են առել, ահա,

Ու խնդությամբ լցված սլանում են վերև:

Իմ խոր անուրջներում ցնծուն պահ էի տենչում,

Եվ օրհնում եմ օրն այս, հենց այդ պահն է հիմա,

Փոխադարձ հույզերի փայլերով ենք օծվում՝

Երանելի սիրո ծնունդ հոգեհմա:

Երկնային հայացքով շատ նուրբ ես, իմ արև՛,

Քնքշությամբդ արբած կրկնում եմ վստահ,

Վերից ինձ ուղարկված լուսաթռիչ պարգև,

Ես քեզ տեսա իմ մեջ և ինձ քո մեջ տեսա: